Կարծիք

Քրիստինա Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Համակցված ուսուցման տեխնոլոգիան վաղուց է կիրառվում ՀՀ կրթության համակարգում: Սակայն անգլերենի տնտեսագիտական կողմնորոշման դասընթացում նրա կիրառումը աչքի է ընկնում իր առանձնահատկություններով: Քրիստինա Թորգոմյանը փորձում է հաղորդակցական մեթոդաբանության տեսանկյունից մշակել անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգ, հաշվի առնելով թե՛ ՀՀ կրթության համակարգի և թե՛ զարգացած երկրներում գոյություն ունեցող առաջավոր փորձը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ոչ լեզվական բուհում համակցված ուսուցման մեթոդական համակարգ ստեղծելու անհրաժեշտությամբ: Ատենախոսն իր առջև հստակ խնդիրներ է դնում և լուծում է հետազոտության ընթացքում: Նա ուսումնասիրել է համակցված ուսուցման ժամանակակից մոդելները, մոտեցումները և խիզախել է մշակել այսպես կոչված Պլատոյի էֆեկտի հաղթահարման մոտիվացիայի մատրիցը, որն ընկած է նրա կողմից մշակված մեթոդական համակարգի հիմքում:

Ատենախոսը իր հսկայածավալ հետազոտության ընթացքում օգտագործում է հայ մեթոդական հանրության համար ինչ-որ առումով անհայտ հասկացություններ, մոդելներ, հայեցակարգեր:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, ձևակերպում է նպատակն ու խնդիրները, նախնական վարկած է առաջադրում, ներկայացնում է հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Անգլերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ «Հաղորդակցման միջոցների և տեխնոլոգիաների դիդակտիկ հնարավորությունները անգլերենի դասավանդման գործընթացում» ենթագլխում Քրիստինա Թորգոմյանը սահմանում է «համակցված ուսուցում» հասկացությունը, ներկայացնում է նրա ձևավորման և զարգացման պատմությունը, հանգամանորեն ներկայացնում է համակցված ուսուցման հիմքում ընկած տեխնոլոգիաները:

Երկրորդ՝ «Անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները, դրանց առավելություններն ու թերությունները» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է անգլերենի ուսուցման թարգմանական-քերականական, ուղիղ, տեսալսողական, լեզվի հաղորդակցական դասավանդման մեթոդները: Կարևորվում է հատկապես այն բաժինը, որը վերաբերում է հաղորդակցական առաջադրանքների մշակմանը:

Երկրորդ՝ «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդը՝ ուսումնական գործընթացի բարելավման պայման» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդի էությունը, առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները» վերնագրով ենթագլխում ատենախոսը մանրազնին ուսումնասիրել է «համակցված ուսուցման» մեթոդին վերաբերող մեթոդական գրականություն և հետազոտության արդյունքում ներկայացրել է իր սահմանումը:

Երկրորդ՝ «Ստեղծարարությունը և ուսուցման կառավարման համակարգերի դերը համակցված ուսուցման պայմաններում» ենթագլխում ատենախոսը հանգամանորեն վերլուծում է Վոլլասի «4 փուլային գործընթաց» մոդելը, որը բաղկացած է նախապատրաստման, ինկուբացիոն, լուսավորման և իրականացման փուլերից: Այդ մոդելն արդյունավետ է հատկապես բառապաշարի ամրապնդման փուլում: Անգլերենի ինտերակտիվ ուսուցման տեսանկյունից ուշադրության է արժանի Ռոդեսի 4 Պ-երի գաղափարը՝ Պերսոնա (Person), Պրոցես (Process), Պրեսսա (Press) և Պրոդուկտ (Product), ըստ որի՝ դասանոյթի յուրացման գործընթացում կարևորվում է ոչ միայն սովորողների անձնային որակները, այլև այն գործընթացը, որը կազմակերպվում է դասավանդողի կողմից:

Երրորդ՝ «Համակցված ուսուցմամբ անգլերենի դասավանդման գործընթացը և առցանց հարթակների օգտագործման հնարավորությունները» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Համակցված ուսուցման կիրառումը բուհերում անգլերենի դասավանդման գործընթացում» ենթագլխում ատենախոսը ընդհանուր գծերով ներկայացնում է անգլերենի ուսուցման առանձնահատկությունները լեզվական և ոչ լեզվական բուհերում: Ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է անգլերենի ուսուցման դասընթացները ՀՊՏՀ-ում: Դրական գնահատելով ՀՊՏՀ-ի փորձը, ատենախոսը գրում է՝ «ՀՊՏՀ դասախոսները անհավանական սեղմ ժամանակահատվածում ստիպված էին իրենց ուսումնական ռեսուրսները վերափոխել առցանց ռեսուրսների՝ թվայնացնելով ուսումնական նյութերը և տեղադրելով դրանք առցանց հարթակներում»: Դրա հետ մեկտեղ, նա առցանց ուսուցման առկա վիճակը բավարար չի համարում և առաջարկում է իր կողմից մշակված մեթոդական համակարգը:

Երկրորդ՝ «Ոչ լեզվական բուհում փորձարարական դասավանդման գործընթացը, վերլուծական գործիքների օգնությամբ հետազոտության իրականացումը» ենթագլխում Քրիստինա Թորգոմյանը ներկայացնում է

փորձարարական ուսուցման ընթացակարգերը, նպատակը, խնդիրները, փորձարարական և ստուգողական խմբերում ներգրավված ուսանողների քանակը: Մինչ փորձարարական ուսուցման սկսելը նա իրականացնում է անանուն հարցում: Ընդհանուր առմամբ, ատենախոսը համեմատական կտրվածքով ներկայացրել է ուսանողների ընթերցանության, բանավոր խոսքի, գրավոր խոսքի, ունկնդրման հմտությունները:

Երրորդ՝ «Ոչ լեզվական բուհում առցանց հարթակների միջոցով անցկացվող անգլերենի դասերը, առանձնահատկություններն ու ամփոփված արդյունքները» ենթագլխում Քրիտինե Թորգոմյանը ներկայացնում է առցանց հարթակների միջոցով անցկացվող անգլերենի տարբեր դասեր: Նա բացահայտում է Nearpod առցանց հարթակի հնարավորությունները, ըստ այդմ մշակում է առցանց դասեր, կոնկրետ տեքստերի օրինակով ներկայացնում է տնտեսագիտական, գործարարական տեքստի հետ աշխատանքի մեթոդիկան: Ուշադրության են արժանի ատենախոսի կողմից մշակած թե՛ թարգմանական, թե՛ հաղորդակցական վարժությունների համակարգերը:

Քրիստինա Թորգամյանը կատարել է բավականին հետաքրքիր աշխատանք: Ատեանոխսության լեզուն և ոճը համապատասխանում են առաջադրվող պահանջներին: Եզրակացությունները բխում են հետազոտության խնդիրներից: Բոլոր գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ են կառուցված:

Ինչ վերաբերում է թերացումներին և վրիպումներին, ապա կարող ենք նշել հետևյալը.

1. Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ էջ 103-ում նշված է, որ մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել են ուսուցման կառավարման հայտնի համակարգերը, ինչպիսիք են Moodle, Blackboard, Desire2Learn և Sakai-ն՝ համեմատելով վերջիններիս հնարավորությունները և թերությունները: Խնդրում ենք մեկնաբանել, թե վերոնշյալ հարթակներից որն եք կիրառել ձեր փորձարարական դասավանդման ընթացքում, կամ ինչու դրանք չեք օգտագործել՝ նախընտրելով այլ հարթակներ:

2. Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ էջ 140-ում նշվում է, որ դասավանդման արդյունքում ակնկալում եք ուսանողների մոտ գործարար անգլերենի բառապաշարի հարստացում և ամրապնդում՝ կիրառելով զանազան առցանց գործիքներ և հարթակներ: Կցանկանայինք, որ ատենախոսը մանրամասներ տվյալ առցանց հարթակների ընտրության սկզբունքը, և արդյոք գարծարար անգլերենի բառապաշարի ուսուցման ընթացքում անդրադարձ է իրականացվել գործարար անգլերենի փոխաբերություններին, օրինակ, blue-collar employee, black market, business backbone, orange goods և այլն, փոխաբերությունների ուսուցմանը:

3. Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ էջ 138 նշված է, որ օգտվել եք առցանց դասերի հաշվետվություններից և առանձնացրել եք ուսանողների մոտ առավել հաճախ կրկնվող սխալները գործարար անգլերենի բառերը օգտագործելիս և աղյուսակ 14-ում ներկայացրել եք 2 դասերից ստացված սխալները՝ առաջարկելով գործիքներ և հարթակներ, որոնց միջոցով ամրապնդում եք տվյալ բառապաշարը: Կխնդրեինք պարզաբանել, արդյոք նման աղյուսակներ կազմել եք մյուս դասերի վերաբերյալ և աշխատել այդ սխալների վրա:

4. Ատենախոսության էջ 143-146-ում անդրադարձ է կատարվել մտքի քարտեզներին, հուշաքարտերին և բառային ամպերին, ինչպես նաև քննարկվել է վերջիններիս դրական ազդեցությունը գործարար անգլերենի բառապաշարի հարստացման և ամրապնդման վրա: Աշխատանքը էլ ավելի համապարփակ կլիներ, եթե պատկերավոր գործիքների քանակը գերակշռեր:

Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ Քրիստինա Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» ատենախոսությունը ամբողջական, լեզվական և գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է,

համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով / գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջներին, միջնորդում ենք ԵՊՀ-ում գործող՝ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
մանկ, գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Խ. Բաղդասարյան

Ս. Խ. Բաղդասարյանի ստորագրությունը
Հաստատում եմ՝ ՀՊՄՀ-ի գիտ.քարտուղար Մ. Իսպիրյան

29.11.2023թ.